ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ե 40/11-7189
«25» 12 2018թ.

ՀՀ, ք Երևան 0061, Արշակունյաց 63
Հեռ.՝(+374 10) 44-34-80
Հեռ.՝(+374 10) 44-29-04
Հեռ.՝(+374 60) 37-77-37
Հեռ.՝(+374 60) 37-26-56

«ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ՝
Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Դանիելյան,

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության և «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի միջև 27.04.2018թ. կնքված N ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/16-3 պայմանագրով (այսուհետև՝ Պայմանագիր) նախատեսված ապրանքների մատակարարման վերջնաժամկետ է սահմանված 2018թ. դեկտեմբերի 15-ը, սակայն «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ-ն Պայմանագրով նախատեսված ապրանքներից ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությանը չի մատակարարել «տավարի միս տեղական ոսկորոտ» - 5810 կգ-ը: Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետը և 2.1.7.1 կետի բ) ենթակետը՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունը 2018թ. դեկտեմբերի 25-ից՝ միակողմանի մասնակի լուծում է վերը նշված Պայմանագիրը՝ 5810 կգ «տավարի միս տեղական ոսկորոտ» ապրանքի մասով, որի գումարը կազմում է 12758585,7 (տասներկու միլիոն յոթ հարյուր հիսունութ հազար հինգ հարյուր ութսունհինգ ամբողջ 7) ՀՀ դրամ: Նշված գումարի չափով Պայմանագրի միակողմանի մասնակի լուծումից հետո՝ «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/16-3» ծածկագրով պայմանագրի ընդհանուր գումարը կազմում է 38107374,3 (երեսունութ միլիոն հարյուր յոթ հազար երեք հարյուր յոթանասունչորս ամբողջ 3) ՀՀ դրամ:

Տեղեկացնում ենք, որ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունը «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի վճարման գումարներից ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին կփոխանցի 57414 (հիսունյոթ հազար չորս հարյուր տասնչորս) ՀՀ դրամը որպես տույժ՝ Պայմանագրի

6.2 կետի համաձայն, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին կփոխանցի 4391940 (չորս միլիոն երեք հարյուր իննսունմեկ հազար ինը հարյուր քառասուն) ՀՀ դրամը որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովման գումար (10%), հիմք՝ ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն-որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 18-րդ ենթակետի դ) կետ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ՝ ԱՐՏՅՈՄ ՄԽՈՅԱՆ

Կատարող՝
Ա.Առաքելյան,
ՀՀ ԱՆ ՔԿԾ ՆՏԱ բաժին
Հեռ.՝ 060 -37-05-30